ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «30» օգոստոսի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 23-30, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպության (այսուհետ նաև «ԱՏՁՄ» ՀԿ) գրասենյակում տեղի ունեցավ ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արկադի Սահակյան	ԱՏՁՄ ՀԿ իրավաբան (հանձնաժողովի նախագահ).
Ասյա Սեփխանյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Արթուր Ավետիսյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Կարեն Մկրտչյան	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար):

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Սահակյանը, իսկ քարտուղարն էր՝ Կ. Մկրտչյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Կ. Մկրտչյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի **«Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

Որոշվեց՝

1. Քարտուղարին՝ ծանուցել մասնակցին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից սահմանված կարգով շտկվել են անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

2. Հաստատել ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ՝** բավարար.

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԱՏՁՄ-ԲՄԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին, 2-րդ, 3-րդ** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սեփխանյան _____

Ա. Ավետիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____